

Թ. ԵՄՄԱԻՈՒՍ (Քուպեպե), ՆԷՊԻ ՍԱՄՈՒԷԼ,
ԿԱՐԻԱԹԱՐԻՄ, ԵՄՄԱԻՈՒՍ (Նիկոպոլիս)
ՌԷՄԼԷ, ԼԻԻԿ, ՅՈՊՊԷ

1. Եմմաուսի աւանդութիւնը. — Եմմաուս կը յիշուի Ս. Ղուկասու Աւետարանին մէջ (ԻԳ. 13-14): Գիւղ մըն է ան և Երուսաղէմէն 160 ասպարէզ հեռու կը գտնուէր. ուրիշ թարգմանութիւններ՝ ինչպէս յոյն, լատին և ուրիշներ 160 ի տեղ ունին 60 ասպարէզ միայն. հին սինէականը, հայերէնը եւ ուրիշներ հաստատ կը բռնեն 160. այսպէս՝ ձեռագիրները մին կամ միւսը կը յիշատակեն, որով Աւետարանի Եմմաուսի ձշգուծի պարագան դժուարութեանց բաղխած և տեղի տուած է վիճարանութեան: Մենք պիտի յիշենք երկու Եմմաուս՝ մին Քուպէպէ և միւսը Նիկոպոլիս, առաջինը 60 ասպարէզ հեռաւորութեամբ գիւղ մը, իսկ երկրորդը 160 ասպարէզ հեռաւորութեամբ Եմմաուսը. երկուքին ալ աւանդութիւնը նոյն է, որ է Ս. Ղուկասու Աւետարանի մէջ յիշատակուած (ԻԳ. 13-35) յարուցեալ Փրկչին և երկու աշակերտներուն Եմմաուսի ճամբորդութեան սրտառուչ դրուագը: Թէ ասոնց երկուքէն ո՞րն էր բուն աւետարանական Եմմաուսը, մենք այդ մասին բան մը պիտի չկրնանք ըսել, միայն մէջ պիտի բերենք երկու տեղերու նրկատմամբ արտայայտուած կարծիքները և աւանդութիւնները: «Եմմաուսը, ըստ աւանդութեան, հայրենիքն է Ս. Կղէոպայի և իր որդւոյն Ս. Սիմէոնի որ Երուսաղէմի երկրորդ եպիսկոպոսը եղաւ: Ուստաւորի մը երեւոյթին տակ, աստուածային վարդապետը՝ անոնց ճանապարհին Երուսաղէմի մէջ Քրիստ-